Յառաջիկայ զարնան սկիզբը կը նախատեսուի, որ Եւրոխորհուրդի նախարարական յանձնաժողովի նոր նախագահ Անթանան Վալիտինայի այցելի Հարաւային կողմէ: Ազգայնականական լրատու աղբիւրներու համաձայն, ի հակադրութիւն Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին, նախարարական յանձնաժողովը աւելի ճկուն է եւ պատեհ առիթ կ'ունենայ լուծելու համար Ազգայնական - Եւրոպական խորհուրդ տարակարծութիւնները: Անոնք կը յայտնեն, որ այս ծիրին մէջ Ա. Վալիտինայի այցելութիւնը աւելի շինիչ հիմքերու վրայ պիտի հաստատէ Ազգայնականի մէջ մարդկային իրաւանց հարցերու գծով Պաքու - Եւրոխորհուրդ երկխօսութիւնը:

ՌՈՒԲԷՆ ՇՈՒԳԱՐԵԱՆ՝ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ՔԱՆԱՍԱՅԻ ՄԷՋ

13էն 16 Փետրուար աշխատանքային այցելութեամբ Ուաշինկթըն կը գտնուէր Հայաստանի արտաքին գործոց փոխ նախարար Ռուբեն Շուկարեան: Այցելութեան ընթացքին ան հանդիպումներ ունեցած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերու տեղական դեսպան Էլիզապէթ Ճոնզի, Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերու փոխ տեղակալ գեսպան Լին Փասթորի, Միացեալ Նահանգներու Քոնկրէսի Հայկական հարցերու խումբի համանախագահներ Ֆրէնք Փալոնի եւ Ճոզֆ Նոլմպերի, ինչպէս նաեւ այլ բարձրաստիճան պաշտօնատարներու հետ:

15 Փետրուարին Ռ. Շուկարեան դասախօսած է Ճորճ Ուաշինկթընի անուան համալսարանին մէջ՝ «Հայաստանի եւ հարաւային կողմի շրջանի զարգացումները 11 Սեպտեմբերի իրադարձութիւններէն ետք» նիւթին շուրջ:

Ռուբեն Շուկարեան 19 Փետրուարին հանդիպում ունեցած է Քանադայի արտաքին գործոց փոխ նախարար Կայմեան Լաւերթիի հետ:

Հանդիպման ընթացքին շօշափուած են երկու երկիրներու միջեւ քաղաքական յարաբերութիւններու զարգացման կարելիութիւններուն, անտեսական համապարփակութեան ընդլայնման ուղիներուն, ինչպէս նաեւ նախարարական մակարդակի վրայ գործակցութեան վերաբերող հարցեր:



ՈՒՒԼԻԵՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՓԱՌԱՏՕՆԸ ԱԿՆԱՐԿՆԵՐ ԿԸ ՆԵՏԷ ԲՆԻԿ ՄԵԾ ԴԷՄՔԻ ՄԸ ՎՐԱՅ

«ՏԸ ՖՐԵՉՆՕ ՊԻ» ԱՅՍ ՎԵՐԱԿԻՐՈՎ ԿՈՂՋՈՒՆԷ ԻՐԱՂԱՐՁՈՒԹԻՒՆԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԱՆԱԽՆԸՆԹԱՅ ԶԵՌՆԱՐԿԻ ՄԸ ՍԱՆԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ասիկա յիշատակելի գարունն մը պիտի ըլլայ անոնց համար, որոնք ծանօթ են Ուիլիլմ Սարոյեանի կամ կը ցանկանին ճանչցած ըլլալ գայն: 28 Փետրուարէն 5 Մայիս, Սարոյեանի ստեղծագործութիւններէն օրինակներ պիտի ներկայացուին Ֆրեզնոյի թատերասրահներուն, համերգասրահներուն, թանգարաններուն եւ պատկերասրահներուն մէջ, ինչպէս նաեւ՝ օդային ալիքներուն վրայ:

«Ուիլիլմ Սարոյեան 2002» փառատօնը կը ծրագրուի երեք տարիէ ի վեր եւ աննախընթաց նախաձեռնութիւն մըն է տեղական արուեստի շրջանակներուն մէջ: Փառատօնին կայացման մէջ դեր ունին 29 կազմակերպութիւններ: «Կը յուսանք, որ փառատօնը հետաքրքրութիւն պիտի ստեղծէ Սարոյեանի գործերը կենդանի պահելու համար դաստիարակչական առումով», կ'ըսէ Լէրի Պալաքեան, որ կը ղրխուորէ Ֆրեզնոյի ամէնէն հռչակաւոր զաւակին նուիրուած յարգանքի ձեռնարկը կազմակերպող 50 հոգիէ բաղկացած յանձնախումբը:

Սարոյեանի ծնողները հայ գաղթականներ էին: Ան ծնած է 1908ին: Գրած է կարճ պատմածքներ, վէպեր, թատերախաղեր եւ երգեր: Արժանացած է Նիւ Եորքի Թատերական Բնագիտական «Սըրբըլ» մրցանակին, զրական «Փուլիցըր» մրցանակին՝ իր «Տը քայմ աֆ եուր լայֆ» գիրքին համար (1940ին), եւ Օսթրաիի «Տը հիւմըն քամըլտի» ժապաւէնին ընագիրին համար (1943ին): Սարոյեան մահացած է 1981ին, Ֆրեզնո:

Փառատօնին զաղափարը յղացած է Ուիլիլմ Սարոյեան Հիմնարկին նախագահ եւ Սարոյեանի ստեղծածքին պատասխանատու Ռապրիթ Սեղրակեան, որ 1999ի վերջերս ուղարկած է փառատօնով մը նշել գրագէտին մահուան 20ամեակը:

«Նպատակը Սարոյեանը փառաւորելն էր, կ'ըսէ Սեղրակեան: - Երբ կը կարգանք անոր կանուխ շրջանի գործերը, կ'անդրադառնանք, թէ անոր զաղափարներէն շատերը կ'առնչուին Ֆրեզնոյի մէջ իր փորձագողութեան: 1930ական եւ 1940ական տարիներուն Ֆրեզնո գիտաւորաբար ճանչցուած էր երկրագործութեամբ, եւ մարդիկ այս քաղաքը տակաւին կը զիտեն նոյն ձեւով: Ոչ ոք կը գիտակցի արուեստի աշխարհին մէջ Ֆրեզնոյի դերակատարութեան»:

Սեղրակեան կը յուսայ, որ փառատօնը, Սարոյեանը պատուելու կողքին, մարդոց ուշադրութիւնը պիտի հրահարէ Ֆրեզնոյի արուեստի կեանքին վրայ:

Նկատի ունենալով, որ Սարոյեան ծանօթ անուն մըն է աշխարհի գրական շրջանակներուն մէջ, Պալաքեան կ'ակնկալէ, որ փառատօնը աւելի լայն հետաքրքրութիւն պիտի գրգռէ:

ստեղծէ գրագէտին եւ անոր ծննդավայրին նկատմամբ:

Ամէն տարի Թեյնթի Ուիլիլմ Նուիրուած փառատօն մը տեղի կ'ունենայ Նիւ Օրլիանցի մէջ եւ ձմա Սթայնպէքի նուիրուած փառատօն մը՝ Սայինասի մէջ: Պալաքեան կ'ըսէ, թէ հաւաքական գործակցութեամբ կարելի է Սարոյեանի փառատօնը վերածել տարեկան կամ երկամեակ իրադարձութեան:

Սարոյեանի նուիրուած փառատօնին ամէնէն հետաքրքրական ձեռնարկներէն մէկը «Էն օտիլըն ուիտ Ուիլիլմ Սարոյեան» վերնագիրով բեմական մենախօսութիւն մըն է, որուն հեղինակն ու մեկնաբանը՝ Թոտ Վրոնսքի թատրոնի դասախօս է Տիքընըն քալէճին մէջ:

Ան Սարոյեանը կը պատկերէ իրրեւ Յոսեփ տարիքի մարդ մը, որ կը գրուէ իր տունը հրաւիրուած բարեկամներու հետ:

«Մենախօսութիւնը կը պարունակէ Սարոյեանի մտածումներն ու զաղափարները, կ'ըսէ Վրոնսքի: Փորձած եմ մէկտեղել անոր ուրախութիւններն ու տխրութիւնները: Սարոյեան ունէր մեկամտ դժուր ընկերութիւն մը, որ կրնար յանկարծ փոխուիլ եւ վերածուիլ գուրթութեան»:

Վրոնսքի ծնած է Մինեսոթայի Ռէտ Ուիլիլմ շրջանին մէջ: Ան Սարոյեանը յայտնաբերած է 1980ական տարիներուն, տեսնելէ եւ բեմադրելէ ետք անոր «Տը քայմ աֆ եուր լայֆ» գործը:

«Այնուհետեւ սկսայ կարգալ անոր միւս գործերը, կ'ըսէ ան: - Սակայն լուրջ ուսումնասիրութեան ժամանակ չունեցայ մինչեւ երեք կամ չորս տարի առաջ»:

Վրոնսքի շարքով մը անցուցած է Սթանֆորտի համալսարանին մէջ, ուր ուսումնասիրած է Սարոյեանի արխիւները: Ան նաեւ պրպտումներ կատարած է Քալիֆորնիա Սթէյթ Նուենիվըրսիթիին մէջ՝ ունկնդրելով Սարոյեանի ձայնը պարունակող ձայների գրանցումները:

«Անակնկալ էր ինծի համար, թէ Սարոյեանի անտիպ գրութիւնները որքան յաւ կարտացուցիչն անոր հուշերն են, կը բացատրէ Վրոնսքի: - Ան բնագոյնի մղումով մը կ'ուզէր իր կեանքին արձանագրութիւնը պահել: Յաճախ օրական 18էն 20 էջ կը գրէր՝ արձա-

նագրելով, թէ ինչ ըրած է եւ ինչ կը մտածէ: Միշտ կը գրէր եւ գրածը չէր վերախմբագրեր: Երբեմն կը գրէր նոյնիսկ չգրելու մասին»:

«Հաւաքած փոքրիկ տեղեկութիւններ կազմեցին 120 էջոց գրութիւն մը, որ բաւարար էր 3,5 ժամոց յայտագիր մը լեցնելու համար: Ստիպուեցայ գայն կրճատել 34 էջի եւ 80 վայրկեանի», կ'ըսէ Վրոնսքի, որ ունի Սարոյեանի պէս ծովացու մը յիշեցնող հաստ պեխեր: Ան իր բեմական մենախօսութիւնը առաջին անգամ ներկայացուցած է անցեալ Օգոստոսին, էտիպարայի Միջազգային փառատօնին (Սկոպիտա)՝ մասնակցելով անոր ոչ պաշտօնական յայտագիրներուն:

Փառատօնին ընթացքին Ուիլիլմ Սարոյեան Միտլթեան Հիմնադիր Պէն Ամիրխանեան քալելով պատյունը պիտի ղրխուորէ ղէպի Սարոյեանի բնակած թաղամասերը: Ան խումբեր պիտի առաջնորդէ ղէպի Սարոյեանի ծննդավայրը եւ անոր յաճախած դպրոցը, ղէպի այն ժամը, ուր ան օրաթերթեր կ'առնէր ծախելու համար եւ ղէպի տեղոյն փրեսպիթիլըն եկեղեցին, ուր կը ծառայէր անոր հայրը:

Ամիրխանեան կը յուսայ, որ գարնան կայանալիք փառատօնը յաւելցալ հետաքրքրութիւն պիտի ստեղծէ Սարոյեանի նուիրուած թանգարան մը հիմնելու զաղափարին առնչուած մը:

«Ժամանակն է, որ Ֆրեզնո Սարոյեան գրագէտը յիշելին անդին երթայ, կ'ըսէ Ամիրխանեան: - Սարոյեան գրած է երգեր եւ պատմութեան, սակայն նաեւ գեղանկարիչ էր եւ օրագրութիւն կը պահէր: Հրաշալի մարդ մըն էր: Տակաւին չեմ ձգած հասկնալ, թէ ծրր դասարանին դպրոցը ձգելէն ետք, հայ փոքրիկ մը ինչպէս կրցած էր իրագործել այս բոլորը»:

Ուիլիլմ Սարոյեան Միտլթեան անդամներն Նուիրա իպարիս փառատօնին առիթով պատրաստած է «Սելլըպթիլի Սարոյեան» վերնագիրով յայտագիր մը, որ պիտի ձայնասփռուի 31 Մարտին: Յայտագիրին ընթացքին հրահրեալներ պիտի ընթացնեն հատուածներ՝ Սարոյեանի «Մայ Գեյմ իր Արամ» գիրքին եւ այլ գործերէ: Հրահրեալներուն շարքին են նախկատան ընդհանուր պատասխանատու էնթընի Ֆրէշը, որ 1991ին հրատարակած է Սարոյեանի նուիրուած դրոշմաթուղթ

մը, ինչպէս նաեւ՝ գերագոյն ատենի դատարար Սանտրա Օքսոնը:

«Յայտագիրին զաղափարը ստացայ հօրմէս, որ կ'պարի Սպանիա, կը բացատրէ իպարիս: - Ամէն տարի անոր բնակած գիւղականին բնակիչները կը հաւաքուին եկեղեցիի մը մէջ եւ ծայրէ ծայր կը կարդան «Տոն Քիշոք»ը: Ներկաներէն իւրաքանչիւրը հերթաբար 10 վայրկեան տեղափոխեալ բարձրաձայն ընթերցումներ կը կատարէ գիրքէն»:

Իպարիս կ'ըսէ, թէ հրատարակային տարեկան ընթերցումները կը նպաստեն, որ հաւաքականութիւն մը բարձր պահէ իր գրագէտներուն աւանդը եւ յիշէ գանձը:

Սարոյեան իր գրութիւններուն կողքին գծած է շուրջ 7000 շրտանկար, իւրանկար եւ գծանկար, իր անձնական հաճոյքին համար: Փառատօնին ընթացքին Ֆրեզնոյի Արուեստի թանգարանին մէջ 95 նկարներ պիտի ցուցադրուին անոր օրագրութիւններուն, նոթատեղերուն եւ ձեռագիրներուն կողքին:

Թէեւ Սարոյեան գեղանկարչական ուսում չունէր, սակայն անոր արուեստը գրաւած է հաւաքածոյ պահուցներու ուշադրութիւնը: Սարոյեան Հիմնարկը անոր կարգ մը գեղանկարները վաճառած է մինչեւ 7 հազար տոլարի:

«Սարոյեանի ստեղծագործական մղումը զգալի է իւրաքանչիւր գեղանկարի մէջ, կ'ըսէ ցուցահանդէսին պատասխանատուն՝ Ժաքլին Փիլլըր: - Անոր գործերը կը պատկանին վերացապաշտ արտայայտչապաշտ դպրոցին: Ան բոլորովին անզուգուի էր»:

Սեղրակեան հետեւալ ձեւով կը բացատրէ, թէ Սարոյեան ինչ պիտի գագր իրեն նուիրուած փառատօնին նկատմամբ.

«Կ'ենթադրեմ, որ ան ժպտագէմ պիտի նստէր եւ պիտի ուզէր տեղ մը բան մը փոխել: Ինչ պիտի ղեկավարէր փառատօնը: Պիտի չըսէր՝ «Մի՛ ընէք», սակայն պիտի չուզէր, որ իր կենդանութեան կատարուէր փառատօնը: Իր հուշեան չէր պատշաճեր սախկա»:

* Ուիլիլմ Սարոյեանի փառատօնին աւելի քան 60 ձեռնարկներուն մասին յաւելցալ տեղեկութիւններ կարելի է ստանալ դիմելով հետեւեալ հասցէին. www.saroyanfestival.com

«ԿԱՆԱՐԿ ԿԸ ՔՈՂԱՉԵՐԾԻ ԻՐ ՇՆՈՐՀՆԵՐԸ»

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ՏԸ ԹԱՅՄՁ» ԹԵՐԹԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ԵՎՈՅԵԱՆԻ ԱՐՈՒԵՍԻՆ ԱՅՆ ԿՈՂՄԸ, ՈՐՈՒՆ ՔԻՉԵՐ ԾԱՆՕԹ ԵՆ

Դժուար է Ազոմ էկոյեան ըլլալ: Օր մը մրցանակներ կը շահի ժապաւէններու համար, ուրիշ օր մը գրագած եւ օֆերա մը գրելով եւ բեմադրելով, ապա կը գտնուի «Արթէլն Երկ» կազմակերպութեան հիմնադրութեան տասնամեակին առիթով ապստրբուած տարածաարքային արուեստի գործ մը բացատրելու վիճակին մէջ:

Էկոյեան յղացած է տեսողական արուեստի տարբեր ծրագրեր: Անոր ծնողները գեղանկարիչ էին, եւ էկոյեանի իրագործումներուն ցանկը կ'ընդգրկէ տարածաարքային արուեստի գործեր Օքսֆորտի եւ Իրլանտայի Արդի Արուեստի թանգարաններուն համար: Ան նաեւ մասնակցած է Վենետիկի Պիեննայէին: Իրօք, ղէպի արուեստի աշխարհ անոր վերջին «ասպտակութիւն» կը նշէ «Արթէլն Երկ»-ի գործունէութեան 2002ի եղանակին բացումը:

Էկոյեան ժապաւէնի խնթ մըն է: Ան համակալած է նկարահանումի գործիքով եւ ժապաւէնի պատրաստութեան յետին մանրամասնութիւններով: Ասոնք հիմը կը կազմեն անոր տարածասարքային գործին:

«Մտածեցի, որ իրապէս հետաքրքրական պիտի ըլլար անցեալի մը արահետագիտութեան նուիրուած կտակարան մը ստեղծելը, կը բացատրէ էկոյեան: - Տարածասարքային այս գործը պիտի կատարէ մեքենական յուշարարի

Ֆիզիքական էր: Կը գիտակցէի տարողութեան, սակայն կարօտով կը փնտռեմ ժապաւէնի պատրաստութեան նոյնիքն այդ ֆիզիքական գործընթացը: Մտածեցի, որ անիկա շատ կը պատշաճէր այս ծրագրին, եւ հետեւաբար գրագացուցի ժապաւէնի մը երկրորդը հիւսելու զաղափարը»:

Օղէն առկախ 600 մեթր երկարութեամբ ժապաւէնը որբէէ հին ժապաւէն մը չէ, այլ էկոյեանի բեմադրած Սամուէլ Պեքէթի ամէնէն աւելի սիրուած թատերերի գլխաւոր դերերէն է «Քրաֆիս լայսթ քէյֆի»-ի երկրորդը: Ծան շըրթ կը մարմնաւորէ տարեց մարդու մը տիպարը, որուն կեանքը կոտորակաւ անցնէ թակարդութեան մէջ: Ան կ'ըսէ էկոյեան: - Անիկա իր ազգեցութիւնը գործած է շատերու վրայ, որոնք վիտուին կ'օգտագործեն իրրեւ արխիւային արձանագրութեան կողմէն: Մինչ այդ այցելուներ աւելի փոքր սենեակի մը մէջ պիտի զրուեն ժապաւէնի մը արուեստը, փոշի գեծ եւ ոչ թէ օղէն սուկայի, այլ՝ թուային տարբերակը: Տարածասարքային այս գործը նաեւ կ'ընդգրկէ մանրակերտ լարիւրինթոնի նման միջանցքներ, ուր գանապարհներ կը յուշեն, թէ ինչպէս յիշողութիւնները պարտադրաբար փո-

փոխութեան կ'ենթարկուին արհեստագիտութեան զարգացումին հետ:

Այժմ էկոյեան իր նկարահանումները կը կատարէ թուային արհեստագիտութեամբ: Սակայն ան խորապէս կը գիտակցի, թէ այս գարգացումը ինչպէս շրջած է ժապաւէնի պատրաստութեան գործընթացը: «Վերջերս կը գրուէր ժապաւէններ խմբագրող բարեկամի մը հետ, որ կը պատրաստէր բեմադրիչի մը թուային արհեստագիտութեամբ նկարահանուած առաջին գործը: Ան ընկճուած կը զգար ի տես պատկերուն նիւթի հետեւի: Ժապաւէնի խմբագրի մը դերը միշտ այլ կենսական է, սակայն ներկայիս անոնք ստիպուած են աշխատել բազմամթիւ բաներու վրայ, գործընթացները պէտք է կատարուի ըլլան ամիսներ առաջ: Թուային արհեստագիտութիւնը հրաշալի է, որովհետեւ ան միջակայն է, սակայն անիկա նաեւ կը կորցնի իր տեղը ու իր արհեստը: Նկարահանումի ոչ թուային արհեստագիտութիւնը կ'ընձեռնէր ճշմարիտ կեդրոնացումի պահին: Տարածասարքային այս գործը կը վերաբերի այս նիւթին: Կ'անգրադառնանք, թէ կայ աւելի խորախորհուրդ անոր մը, գործը ձգելու մը, որով կը ձգելու մը ետին»:

Արդեօք էկոյեան ակներեւ կ'ապրէ կը տեսնէ իր ժապաւէններուն եւ տարածասարքային արուեստի իր գործերուն միջեւ: Ան կը խոստովանի, թէ երկուքին պար-

«ՍԱՅԱԹ ՆՈՎԱ» ԺԱՊԱԷԼԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ Կ'ԱՐԳԻԼՈՒԻ

Հայաստանի լատենոգրական արխիւներու պետական կեդրոնը վերջերս արգիլած է Սերգէյ Փարաշանովի «Սայաք Նովա» կամ «Նոա զոյնը» ժապաւէնը վերակառուցելու առաջարկ մը: Բեմադրիչ Լեւոն Գէորգեան Փարաշանովի թանգարանին մէջ լրագրողներու յայտնած է, թէ ժապաւէնի վերակառուցումը ծրագրած է Փարաշանովի պատրաստած նախագիծին համաձայն, սակայն ծրագրին գործադրութեան համար անհրաժեշտ են նիւթեր, որոնք զանց առնուած են ժապաւէնի պատրաստութեան ժամանակ: Այդ նիւթերը պահուած կը մնան լատենոգրական արխիւներու պետական կեդրոնին մէջ, որուն պատասխանատուն մերժած է տրամադրել նախապէս գրաքննիչներու կողմէ կտրատուած տեսարաններուն օրինակները, պատճառաբանելով, որ իրրեւ շարժապատկերի մասնագէտ ինք չի կրնար թոյլ տալ, որ ունէ մէկը իր «արհեստագիտական յանձնարարութեան մէջ կ'աշխատեն»:

Այդ նիւթերը պահուած կը մնան լատենոգրական արխիւներու պետական կեդրոնին մէջ, որուն պատասխանատուն մերժած է տրամադրել նախապէս գրաքննիչներու կողմէ կտրատուած տեսարաններուն օրինակները, պատճառաբանելով, որ իրրեւ շարժապատկերի մասնագէտ ինք չի կրնար թոյլ տալ, որ ունէ մէկը իր «արհեստագիտական յանձնարարութեան մէջ կ'աշխատեն»:


Այդ նիւթերը պահուած կը մնան լատենոգրական արխիւներու պետական կեդրոնին մէջ, որուն պատասխանատուն մերժած է տրամադրել նախապէս գրաքննիչներու կողմէ կտրատուած տեսարաններուն օրինակները, պատճառաբանելով, որ իրրեւ շարժապատկերի մասնագէտ ինք չի կրնար թոյլ տալ, որ ունէ մէկը իր «արհեստագիտական յանձնարարութեան մէջ կ'աշխատեն»:

«Սայաք Նովա» ժապաւէնը, որ նկարահանուած է 1970ական տարիներուն, սուր կերպով քննադատուած է խորհրդային պատասխանատուներու կողմէ: «Շատեր կ'ըսեն, թէ «Նոա զոյնը» յստակ ժապաւէն մը չէ: Եւ անիկա ճիշդ է: Ժապաւէնը այնքան կտրատուած է, որ անոր բնաբան խորտակուած է», կը բացատրէ Գէորգեան: Գրաքննիչներուն միջամրտութեան պատճառով ժապաւէնը վերանայնուած է «Նոա զոյնը»: Անիկա կրճատուած է 2 ժամով:

ՃԱԿԱՍԱԳՐԻ ՀԵԳՆԱՔՈՎ... Սերգէյ Փարաշանովի այրին՝ Սվետլանա Շերպաթովա վերջերս «Արմինֆօ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ իր գաւազը՝ Սուրէն բանտարկուած է Քիելի Յիթատելի բանտին մէջ, ուր իր հայրը բանտարկուած էր: Սուրէն Փարաշանով ամբաստանուած է թմրեցուցիչի վաճառքի յանցանքով, թէեւ ան անմեղ կը յայտարարէ ինքզինք: Բանտին իր գաւազն ուղարկած նամակի մը մէջ Սերգէյ Փարաշանով նկարագրած է Լուբլանովսք Յիթատելի ճարտարապետական կառուցը: Ան փախաբացած է, որ իր գաւազը չէնք տեսնէ նաեւ ներսէն...:

Պատրաստեց՝ Լ. ԿԻԼՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ (ՅԱՊԱՆՈՒԱԾ)

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Ն



ՊԱՍՏԵՐՈՒՄ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԸ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

Լիրանանի պատերազմի աղջկանց Ա. դասակարգի արդյունավետության ֆայնըլ ֆորի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական կազմը, որ 3րդ դիրքին համար կը ճակատի Սատաքայի դէմ, շարժափերը յաջողեցաւ առաջին մրցումը շահիլ, 56-42 արդիւնքով (կրիստալ)՝ 31-24 ի նպաստ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի:

Անոնց միջև երկրորդ հանդիպումը տեղի կ'ունենայ վաղը՝ Երեքշաբթի, Հ.Մ.Ը.Մ.Ի «Թնճուկեան» մարզադաշտին վրայ, ժամը 18:00ին:

Եթէ երկրորդ մրցումը եւս վերջ գտնէ Հ.Մ.Ը.Մ.Ի յաղթանակով, Հ.Մ.Ը.Մ.Ի պիտի գրաւէ երրորդ դիրքը, առանց սպասելու երրորդ եւ վերջին մրցումին, որ տեղի կ'ունենայ յառաջիկայ կիրակի օր, անշուշտ եթէ կարիքը զգացուի:

ԹԵՆԻՍ

ՍԱՐԳՍԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ ՄԵՍՖԻՍԻ ՄՐՑԱՇԱՐՔԷՆ

Մեմֆիսի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող թենիսի տղոց մրցաշարքի մը ընթացքին, հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեան յաջողեցաւ բաւական լաւ արդիւնք արձանագրել, սակայն չկրցաւ հասնիլ կիսաարտական հանգրուան, քառորդ աւարտականին 6-3 եւ 6-4 արդիւնքով պարտուելով մը կրեիլ ետք 2րդ գասուած ամերիկացի ինտի Ռոտիքէն:

Ա. հանգրուանին Սարգսեան պարտուեան մատնեց պելճիքացի Բրիսթոֆ Ռոքիւսը՝ 6-2 եւ 6-3, իսկ Բ. հանգրուանին՝ շուէտացի Եոնաս Պիորքմանը, 1-6, 6-3 եւ 7-6 արդիւնքով:

Քառորդ աւարտականին յաղթանակներ արձանագրեցին Ժան - Մայքըլ Կամպիլ (Մ. Ն.), Ճէյմս Պլէյթը (Մ. Ն.) եւ Ջաւիէ Մալիս (Պելճիքա): Այս վերջինը դուրս ձգեց ամերիկացի Թոմ Մարթինը (7-6, 3-6 եւ 7-5), իսկ Պլէյթը թիւ 1 գասուած գերմանացի Թոմի Հասսը (6-3 եւ 6-1):

ՊՈՒՆՏՍՆԻԿԱ

ՊԱՅԷՐ ԼԵԻԵՐՔՈՒԶԸՆ՝ ԱՌԱՋԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուներսլիկա) 24րդ հանգրուանի գագաթի ճակատումը՝ Պայեր Լեյքերուզնի եւ Պորուսիա Տորթնուտի միջեւ վերջ գտաւ ի նպաստ հիւրընկալ կազմին՝ Պայերի, որ 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնելէ ետք իր հիւրը, անկէ իւնց պարագլուխի դիրքը, մէկ կէտի առաւելութիւն ունենալով անոր վրայ: Նշենք, թէ Տորթնուտ Բ. կիսախաղը շարունակեց տասը մարկիկով, Եան Քոլըրի կարմիր քարտ ստանալէն ետք (53րդ): Պայերի չորս անպատասխան կոլերը նշանակեցին Միքայել Պայար (32րդ), Քարսթըն Ռամելով (50րդ), Օլիվըր Նեովիլ (64րդ) եւ Տիմիթար Պերպաթով (75րդ):

24րդ հանգրուանին մեծագոյն յաղթանակը, սակայն, եղաւ Պայերն Միւնիխ, որ 6-0 արդիւնքով շախշախեց իր հիւրը՝ Բորսլուք: Բլաուտիօ Փիլարո (14րդ եւ 55րդ), Շթեֆան Էֆենպերկ (35րդ՝ փենալթիով), Մեհմէթ Շոլ (45րդ եւ 48րդ) եւ Ճիլվանի Էլպեր (74րդ) նշանակեցին Պայերին կոլերը:

Քայլերդալուրդը կրեց ծանր պարտութիւն մը՝ 5-1, Հերթա Պերլինէն:

Համպուրկ արձանագրեց կարեւոր յաղթանակ մը, երբ 1-0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Վերտըր Պրեմըրի դաշտէն, շնորհիւ Պեռնարտո Ռոնէլիի նշանակած կոլին (74րդ):

Ստորեւ՝ 24րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պայեր Լեյքերուզն - Պորուսիա Տորթնուտ 4-0	Վերտըր Պրեմըր - Համպուրկ 0-1
Վոլֆսպուրկ - 1860 Միւնիխ 1-3	Հանպու Ռոսթը - Շթուրկարթ 1-1
Պայերն Միւնիխ - Բորսլուք 6-0	Շալքէ - Ֆրայպուրկ 3-0
Հերթա Պերլին - Քայլերդալուրդը 5-1	Նիւրնբերկ - Քէօլն 2-0
Չանքը Փաուլի - Պորուսիա Մէոնշտրնկաուպախ 1-1	

ԴԱՍԱՌՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Պայեր Լեյքերուզն	49 (57-29)
2.- Պորուսիա Տորթնուտ	48 (38-20)
3.- Շալքէ	45 (39-23)
4.- Քայլերդալուրդը	45 (46-34)
5.- Պայերն Միւնիխ	44 (47-19)
16.- Բորսլուք	23 (22-44)
17.- Չանքը Փաուլի	17 (26-46)
18.- Քէօլն	15 (11-42)

ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ

ԳԵՐՄԱՆԻԱ ՏԻՐԱՊԵՏԵՑ՝ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Սոլթ Լէյք Սիթիի մէջ տեղի ունեցող 2002ի 2մետնային Ողիմպիականի մրցումներուն վերջին օրը, երէկ առաւօտեան կանուխ ժամերուն տեղի ունեցաւ փակման պաշտօնական հանդիսութիւնը:

Վերջին քանի մը օրերուն ընթացքին Գերմանիա եղաւ տիրապետող իր շահած ոսկի մետալներով, որովհետեւ անոնց շնորհիւ անկախ յաջողեցաւ պատմութիւն կերտել, 2մետնային Ողիմպիականի մրցումներուն շահեալով առաւելագոյն մետալները:

Անցնող քանի մը օրերուն ընթացքին հաստատուեցան աշխարհի նոր մրցանիշներ, սակայն միեւնոյն



Ժոզէմ Ուլյոտէհասկ

տիրացաւ Ժոզէմի ապակիցը, նոյնիմքն՝ Ռոնէ, իսկ պրոնկ մետալին՝ Լասէ Սաէթթե (Նորվեկիա):

Աղջկանց հապար մեթր սիիտ - սքէյթինգի խմբային մրցումներուն, Հարաւային Քորեա շահեցաւ ոսկի մետալ մը եւ հաստատեց աշխարհի նոր մրցանիշ մը, վերջին երկու լէիթերուն գերապանցելով Չինաստանը, որ հանդիսացաւ երկրորդ: Պրոնկ մետալին տիրացաւ Քանադա:

Աղջկանց այս հոգիի աւարտական մրցումը վերջ գտաւ քանատացիներուն յաղթանակով, որ փենայթիներով՝ 3-2 պարտութեան մատնեցին Միացեալ Նահանգները: Պրոնկ մետալին տիրացաւ Շուէտ:

Քանադա շահեցաւ տղոց այս - հոգիի աւարտական մրցումը:



Չախէճ՝ աջ. Եանկ, Եանկ եւ Կի - Հիուճ

ժամանակալ կարգ մը մարզիկներ իրենց գործածած խթանիչ դեղերով արատաւորեցին մարզական այս կարեւոր իրադարձութիւնը: Անոնց կարգին եղան Եոհան Միլեյիլէկ (Սպանիա), Օլիա Տանիլովա եւ Լարիսա Լապիլիս (Երկուքիւն) Միլեյիլէկի (Սպանիա): Միլեյիլէկն իւրեցաւ իր շահած ոսկի մետալը մինչ մնացեալ երկուքիւն արձանագրած արդիւնքը չէղեալ նկատուեցաւ եւ անոնք դուրս դրուեցան մրցումներէն:

Հայաստան ոչինչ կրցաւ ընել Սոլթ Լէյք Սիթիի մէջ:

Աղջկանց սքէյթինգի ցուցադրական մրցումներուն, Հայաստանէն ժիլիա Լեպետեան գրաւեց 27րդ եւ վերջին դիրքը: Աղջկանց դահուկարշափի ալայոմի մրցումներուն, Վանեսա Ռաքէճեան գրաւեց 47րդ դիրքը: Նոյն մրցումներուն, Լիբանանէն Շիրին Նմէյմ գրաւեց 45րդ դիրքը:

Տղոց քրոս - քաուսթրիի դահուկարշափի մրցումներուն շախի մրցումներուն (50 քմ.), Արամ Հաճիեան գրաւեց 57րդ եւ նախավերջին դիրքը:

Խրուսթ Ժանիքա Քոսթելիչ յաջողեցաւ մեծ իրագործում մը կատարել, երբ հանդիսացաւ առաջին մարզիկը, որ 2մետնային Ողիմպիականի մրցումներուն կը շահի չորս մետալներ՝ աղջկանց լեռնային դահուկարշափի մրցումներուն: 20 տարեկան Քոսթելիչ վերջին օրուան մրցումներուն շահեցաւ երեք ոսկի եւ մէկ արծաթ մետալներ: Ան իր վերջին ոսկի մետալը շահեցաւ աղջկանց ալայոմի մրցումներուն: Արծաթ մետալին

(Քանադա):

Տղոց հինգ հապար մեթր սիիտ - սքէյթինգի խմբային մրցումներուն, Քանադա շահեցաւ ոսկի մետալը, Իտալիա՝ արծաթը, իսկ Չինաստան՝ պրոնկ մետալը:

Տղոց պոպայլէյթի մրցումներուն, Գերմանիա եղաւ տիրապետողը, որովհետեւ անկախ շահեցաւ երկու ոսկի մետալ, երկու մասնակցողներու եւ չորս մասնակցողներու մրցումներուն մեծ յաջողութիւն արձանագրելով:

Միացեալ Նահանգներ, որոնք վերջին անգամ 1948ին Սէն Մորիթցի մրցումներուն ոսկի մետալին տիրացած էին (չորս մասնակցողներու մէջ), յուսախաբրին իրենց համակիրները, հակառակ անոր որ անոնց երկու խումբերը շահեցան արծաթ եւ պրոնկ մետալները:

Աղջկանց 5 քմ քրոս - քաուսթրիի դահուկարշափի մրցումներուն, Գերմանիոյ աղջիկները շահեցան ոսկի մետալը: Յաջորդաբար 5րդ Ողիմպիականի ըլլալով Նորվեկիա շահեցաւ արծաթ մետալը, մինչ պրոնկ մետալին տիրացաւ Չուիցերիա:

Սառոյցի վրայ աղջկանց սքէյթինգի ցուցադրական մրցումներուն, 16 տարեկան ամերիկացի Սառա Հիուճ շահեցաւ ոսկի մետալը: Արծաթ մետալին տիրացաւ Իրինա Սլուքցքայա (Ռուսիա), իսկ պրոնկ մետալին՝ Միշել Քուան:

Աղջկանց 30 քմ. քրոս - քաուսթրիի դահուկարշափի մրցումներուն, ոսկի մետալին տիրացաւ Լարիսա Ֆանիա Պելմոնտո՝ պրոնկ մետալը: Սակայն վերջը, Լապիլիսային իւրեցիլ ետք ոսկի մետալը, Փարուլի ինք տիրացաւ անոր, իսկ Պելմոնտո՝ արծաթ մետալին: Պենթէ Սքարի (Նորվեկիա) շահեցաւ պրոնկ մետալը:

Ստորեւ՝ մետալներուն վերջնական դասաւորումը:

	ՈՍԿԻ	ԱՐԾ.	ՊՐ.
1. Գերմանիա	12	16	7
2. Նորվեկիա	11	7	6
3. Մ. Նահանգներ	10	13	11
4. Ռուսիա	6	7	4
5. Զանադա	6	3	8
6. Ֆրանսա	4	5	2
7. Իտալիա	4	4	4
8. Ֆինլանտա	4	2	1
9. Հոլանտա	3	5	0
10. Չուիցերիա	3	2	6
11. Խրուսթիա	3	1	0
12. Աւստրիա	2	4	10
13. Չինաստան	2	2	4
14. Հար. Եորթա	2	2	0
15. Սպանիա	2	0	0
16. Աւստրալիա	2	0	0
17. Էսթոնիա	1	1	1
18. Բրիտանիա	1	0	2
19. Չեխիա	1	0	1
20. Շուէտ	0	1	2
21. Պոլկարիա	0	1	1
22. Ճապոն	0	1	1
23. Լեհաստան	0	0	1
24. Պելլոնուսիա	0	0	1
25. Սլովենիա	0	0	1



Լարիսա Լապիլիս

Լապիլիս: 36 տարեկան Լապիլիսա նախապէս յայտնած էր, թէ ասիկա իր վերջին Ողիմպիականն է: Իտալացի Կապրիելլա



Եոհան Միլեյիլէկ

Փարուլի շահեցաւ արծաթ մետալը, իսկ անոր ապակիցը՝ Սթե-



Շախիքա Զոսթելիչ

Ֆանիա Պելմոնտո՝ պրոնկ մետալը: Սակայն վերջը, Լապիլիսային իւրեցիլ ետք ոսկի մետալը, Փարուլի ինք տիրացաւ անոր, իսկ Պելմոնտո՝ արծաթ մետալին: Պենթէ Սքարի (Նորվեկիա) շահեցաւ պրոնկ մետալը:

ՃՈՆԱՍ ԵՎԻԻՄՊԻ ՍՊԱՆՆՈՒԵՅԱԻ ԲԱՆԱԿԻՆ ԿՈՂՄԵ



Սախմպիի դիակը

ԼՈՒՍԱՆՍԻ, 24 (ՌՈՅԹԸՐԶ) - Անկոլայի ԵՈՒՆԻԹԱ ընդդիմադիր ուժերը Կիրակի օր յայտարարեցին, որ պիտի շարունակեն իրենց պայքարը՝ հակառակ իրենց ղեկավար ճոնաս Սախմպիի սպանության: ԵՈՒՆԻԹԱ առաջարկեց նաև, որ կառավարությունը խաղաղության ճամբան կրնայ բանալ, եթե պինդադու մը յայտարարե:

ԵՈՒՆԻԹԱ Շաբաթ գիշեր հաստատեց մահը 67 տարեկան Սախմպիի, որ սպանուած էր բանակին կողմէ: Պատկերասփիւռի կայանները ցուցադրած էին անոր մարմինը, որ կը կրէր տասնեակ մը փամփուռներու հետքեր: ԵՈՒՆԻԹԱ կողմէ հրապարակուած պաշտօնական յայտարարութիւնը յայտնեց, որ Անկոլայի ամբողջական անկախութեան համար պայքարող շարժումը պիտի շարունակէ պայքարը եւ պիտի չտկարանայ Սախմպիի մահով: Յայտարարութիւնը նշեց նաեւ, որ բոլոր անոնք, որոնք կը հաւատան, թէ Սախմպիի մահով ԵՈՒՆԻԹԱն ալ մեռաւ, կը սխալին, որովհետեւ ԵՈՒՆԻԹԱն դատ է եւ քաղաքական ծրագիր մը, որ պիտի աշխատի իրականացնելու համար իր արմատական սկզբունքները, որոնք կ'ընդգրկեն խաղաղութիւն, արդարութիւն եւ հաշտութիւն: Յայտարարութիւնը որեւէ անկախութիւն չկատարեց կառավարութեան կողմէ մասին, որ ընդդիմադիր շարժումն է կը պահանջէր վար առնել պէնքերը եւ անձնատուր ըլլալ:

Սախմպիի մահով՝ մեկնաբաններ կը նախատեսեն իշխանութեան շուրջ պայքար ԵՈՒՆԻԹԱի շարքերէն ներս: Անոնք կ'ակնկալեն նաեւ, որ շարժումը մասնատուի եւ քանի մը անջատ թելերու բաժնուի: Սախմպի կը նկատուէր ԵՈՒՆԻԹԱի հայրը: Շարժումը հիմնուած էր 1966ին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՑ...

Շարունակուած Ա. ԷջէԳ

Հանձր: Շարուն հանդիպում ուղարկ է Բորէյի, Արաֆատի անպաշտօն փոխանորդ Մահմուտ Ապպասի եւ տնտեսական հարցերու խորհրդատու Մոհամէտ Ռաշիտի հետ: Շարուն երեք անձնակազմութիւններուն հետ հանդիպումներ ունեցած էր քանի մը շաբաթ առաջ՝ մեղմացնելու համար լարուածութիւնը, ինչպէս նաեւ՝ Արաֆատը փոխարինող մը գտնելու համար:

Միւս կողմէ, գգուշաւոր խաղաղութիւն մը տիրեց շաբաթավերջին պաղեստինեան շրջաններուն ու Իսրայէլի մէջ, ուր գինեալ գործողութիւններ չարձանագրուեցան եւ կազմութիւնը համեմատաբար խաղաղ էր բաղադրուած անցեալ շաբաթուան արիւնալի բախումներուն ու գործողութիւններուն:

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենիամին Պրն էլիպար բանակին հրահանգած է առաւելագոյն ինքնազստման դիմելով հակադարձելու, իսկ Արաֆատ, իր կարգին, Շաբաթ օր վերահաստատեց զինագուրդի կոչը՝ պաղեստինեան շարժումներէն պահանջելով գործողութիւններ չկատարել իսրայէլացիներուն դէմ: «Ռոյթըրզ»ի մէջ թղթակիցին հետ ունեցած հարցազրոյցի մը ընթացքին, Արաֆատ մերժեց Շարունի այն ծրագիրը, որ կ'առաջարկէ սպառնալու թեան գոտիներ ստեղծել պաղեստինեան շրջաններուն եւ Իսրայէլի միջեւ: Արաֆատ ըսաւ, որ Շարունի ծրագիրը քանթոններ կը ստեղծէ պաղեստինեան շրջաններուն մէջ, երեւոյթ մը, որ կը մերժուի Օսլոյի խաղաղութեան համաձայնագրի ստեղծման մէջ: Արաֆատ չեղտեց, որ Շարունի ծրագիրը միջազգային օրէնքը կը խախտէ:

● ԵՐԿՈՒՄԱԿԱՆ Միութեան բարձրաստիճանի մէկ պաշտօնատարը ըսաւ, որ յուսախար է Արաֆատը Ռամալլայի մէջ արգելափակուած պահելու որոշումէն: Պաշտօնատարը ակնցուց, որ ԵՒՄ-ի ղեկավարը կը շարունակէ գորակող կանգնել Արաֆատի, գոր կը նկատէ պաղեստինցի ժողովուրդին օրինաւոր ներկայացուցիչը:

● ՅՐԱՆՍԱՅԻ նախագահ Ժաք Շիրաք շաբաթավերջին հեռաձայնային հաղորդակցութիւններ ունեցաւ Չինաստանի եւ Միացեալ Նահանգներու նախագահներուն հետ՝ իր մտահոգութիւնը յայտնելու համար Միջին Արեւելքի մէջ վատթարացած կացութեան մասին:

ՄԱՏԻՑ ԲԱՐՁԱՅ ՄԵԿԵՏՄԻ ԻՐԱՆ ԸՍՏ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ՝ ՈՒՍԱՄԱ ՊԸՆ ԼՍԵՆ ՈՂՁ Է

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարգայ երէկ Թեհրան հասաւ՝ եւ Երեւանի մէջ խաղաղութեան մը համար, որ առիթ մը պիտի տայ իրանի Քարգայի նոր վարչակարգին հանդէպ իր գորակցութիւնը ցոյց տալու:

Իրան ուժգին կը հերքէ ամերիկեան այն ամբաստանութիւնները, թէ կը փորձէ Աֆղանիստանը ապակալուեցնել եւ կ'ըսէ, թէ իրովին զօրավիզ կը կանգնի Քարգայի եւ կ'աշխատի ի խնդիր Աֆղանիստանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման:

Քարգայ, որ կը զլիաւորէր մեծ պատուիրակութիւն մը, որուն կարգին՝ 8 նախարարներ, տեսակցութիւններ պիտի ունենայ երկրին հոգեւոր գերագոյն ղեկավար Ալի խանէնէյի եւ բարեկարգչական նախագահ Մոհամէտ խաթեմիի ու բարձրաստիճանի այլ պաշտօնատարներու հետ:

Քարգայ օդակայանին մէջ ընդունուած է երկրագործութեան նախարար Մահմուտ Հաճճաբիի կողմէ:

Արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Համիտ Ռիզա Ասֆի յայտնած է, թէ Քարգայի այցելութիւնը կարեւոր է, զիտեղ տալով, որ Իրան կ'ուզէ շարունակել զբացի երկիրներուն հանդէպ իր սկզբունքային քաղաքականութիւնը եւ չըջանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ստեղծումին օժանդակել:

Իրան թալիբաններու դէմ պայքար մղած է իր սիսի Դաշինքին գորակող կանգնած զլիաւոր երկիրներէն եղած է, սակայն իրանցի բազմաթիւ պահանջողականներ ներկայիս կը զգուշանան Աֆղանիստանի մէջ ամե-



Քարգայ եւ Խաթեմի

րիկեան զինուորականներ կայունութեան եւ քաղաքական ազդեցութեան:

Իրանի նախկին նախագահ Աքպար Հաշեմի Ռաֆսանճանի Շաբաթ օր Ուաշինկթընը ամբաստանած է՝ յետ պաղ պատերազմեան ժամանակաշրջանին իսլամները Մ. Նահանգներուն ամենէն կարեւոր մրցակիցներուն վերածելու յանցանքով:

Ատհալի առիթով խօսուած քարոզի մը մէջ, Ռաֆսանճանի ըսած է, թէ Պաղ Պատերազմի աւարտէն ետք, Ուաշինկթըն մրցակից մը կը փնտռէր ու «անիկա զարձած է իսլամներուն դէմ»:

ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ ԿԱՐԵՊՈՎ ՊԸՆ ԼՍԵՆ ՈՂՁ Է

Միւս կողմէ, «Նիւ Եորք Թայմզ» թերթը երէկ հաղորդած է, թէ Ուաշինկթընը իր սկզբունքային քաղաքականութիւնը եւ չըջանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ստեղծումին օժանդակելու համար:

Միւս կողմէ, «Նիւ Եորք Թայմզ» թերթը երէկ հաղորդած է, թէ Ուաշինկթընը իր սկզբունքային քաղաքականութիւնը եւ չըջանի մէջ խաղաղութեան եւ կայունութեան ստեղծումին օժանդակելու համար:

ՄՈՒՍՈՒՄԱՆ ԿԸ ԽՈՍԱՆԱՅ ԱՎԱՐԵԿՈՒԹԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱՇՄԻԼ

Միւս կողմէ, Փաքիստանի նախագահ Փերվիշ Մուշարրաֆ շաբաթավերջին յայտարարած է, թէ ամէն անկիւն պիտի փնտռէ գտնելու համար ամերիկացի առեւտրականներին հետ կապուած թղթակից Տէնիլ Փըրլը սպանողները: Ան պաշտօնապէս հռչակած է Փաքիստանի մէջ բոլոր ահաբեկիչներուն դէմ: Ամերիկեան «Ուոլ Սթրիթ ձրոնլը» թերթին թղթակիցը ամերիկացի առեւտրականներին առած են անոր զլիաւոր մը, ապա վիտեօ-երկր թղթակիցի մը զրկած են:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

ՄՈՒՍՈՒՄԱՆ ԿԸ ԽՈՍԱՆԱՅ ԱՎԱՐԵԿՈՒԹԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱՇՄԻԼ

Միւս կողմէ, Փաքիստանի նախագահ Փերվիշ Մուշարրաֆ շաբաթավերջին յայտարարած է, թէ ամէն անկիւն պիտի փնտռէ գտնելու համար ամերիկացի առեւտրականներին հետ կապուած թղթակից Տէնիլ Փըրլը սպանողները: Ան պաշտօնապէս հռչակած է Փաքիստանի մէջ բոլոր ահաբեկիչներուն դէմ: Ամերիկեան «Ուոլ Սթրիթ ձրոնլը» թերթին թղթակիցը ամերիկացի առեւտրականներին առած են անոր զլիաւոր մը, ապա վիտեօ-երկր թղթակիցի մը զրկած են:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

Փերլը (38 տարեկան) Փաքիստանի մեծագոյն քաղաքին՝ Քարաչիի մէջ առեւտրուած էր Յունուար 23ին, մինչ կը փորձէր կապի մէջ մտնել իսլամական ծայրախոսական խմբակներու հետ: Չայն առեւտրական խմբակը Փերլը ամբաստանած է ամերիկացի լրտես ըլլալու յանցանքով:

ՄԵՐՊԻՈՅ ԿԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ՅԱՅՏԵՒ, ԹԵ ՏՐԱՄԱԴԻՐ ԶԷ ՄԼԱՏԻՉԸ ԴԵՏԱՊԵՆԴԵՆՏ

Սերպիոյ վարչապետ Զորան Ճինճիչ յայտնած է, թէ տրամադիր չէ պոսնիացի սերպ զօրավար Ռամո Մլատիչը հետապնդելու, ընելով, որ նման բայլ մը կրնայ քաղաքացիական պատերազմի մը դուռ բանալ:

Հարցազրոյցի մը մէջ Ճինճիչ շաբաթավերջին ըսած է, թէ Պոսնիոյ մէջ ՕԹԱՆԻ 50 հազար զինուորներ եւ Արեւմուտքի զաղտնի սպասարկութեանց ամբողջ կազմակերպիչները չեն յաղողած Մլատիչը ձերբակալել:

Մլատիչ եւ պոսնիացի սերպ նախկին նախագահ Ռատովան Քարաճիչ ՄԱԿի Լա Հէյի ատենախոս կողմէ պատերազմական ոճիրներով ամբաստանուած են՝ 1995ին իսլամ 8000 տղամարդոց եւ պատանիներու հաւաքական սպանութեան եւ Սարաեւոյի երեքուկէս տարուան պաշարումին համար, որ շուրջ 12 հազար զոհ խլած է:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՌՈՒՍԻԱ ԴԷՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԶԻՆԵԱԼՆԵՐ ՀԵՏԱՊԵՆԴԵՆՏ ԱՐՇԱԻՆ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԳԱՂԱՔԱՐԻՆ

Ռուսիա անցեալ շաբաթ քննադատած է Վրաստանի Փանքիսի կիրճէն «Բալխիտա» ինթադրեալ զինեալներ արտաքսելու համար ամերիկեան ղեկավարութեան մասին արտայայտութիւնները:

Ռուսիոյ սպայակոյտի պետ զօրավար Անատոլի Բալանին «Ռեքորֆաքս» լրատու գործակալութեան յայտնած է. «Ռուսիա եւ Վրաստան միասնաբար պէտք է քննարկեն Փանքիսի կիրճին մէջ ահաբեկչական այդ կեդրոնը»:

Ան շեղած է, թէ ամերիկեան ղեկավարութիւն չի տեսներ «այս հանգրուանին»:

Ամերիկացի բարձրաստիճանի պաշտօնատար մը նախապէս յայտնած է, թէ Ուաշինկթըն կը քննարկէ կարելիութիւնը՝ օժանդակելու Վրաստանի, որ հակաչինոյ տակ առնէ անօրէն կիրճը, ուր կ'ենթադրուի, որ չէլէն զինեալներու հետ կապեր ունեցող իսլամական ծայրախոսականներ կեդրոններ ունին:

Ըստ ռուսական «Նեգալիսիմայա Կագեթա» թերթին՝ ամերիկացի զինուորական խորհրդակցանք արդէն իսկ Վրաստան հասած է: Ասիկա հերքուած է ամերիկեան ղեկավարութեան կողմէ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5084 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՇՈՒՆՈՒՄԱԿԱՆ	ՈՒՂԱՎԱՅՆԱԿԱՆ
1. Պատուական քար մը - Էական բայ:	1. Անակնկալ, յանկարծական - կրկին:
2. Առաւօտեան ցօղ - Հորիզոն:	2. Գոռուած, պոռտուած - Սեւ ազուած:
3. Արական օտար անուն - Գեոքեղեայ ծառ:	3. Իզական օտար անուն - յենակ, նեցուկ:
4. Վանայ լիճի աւազանը Արածանիի հովիտին միացնող լեռնանցքը - Ականջի կեղտ:	4. Պահեցողութիւն - Ռուբին Որբերեանի երկերէն:
5. Կարող եզ - Լեռնային նեղ ուղի:	5. Սոփեստ - Մեծ (հակ):
6. Աչք - Կիլիկիոյ բերդերէն - Էական բայ:	6. Ծակատաղի - Հայկր Ամերիկա փոխադրած կազմակերպութիւն (հակ):
7. Ժուռ - Արջամազիլ:	7. Թաղթ - Իւրացո՛ւր:
8. Անձնական դերանուն - Յաւելու - Ողբա՛:	8. Հուղկահար - Ատոմ Եարճանեանի ծննդավայրը:
9. Ոչ մէկ բան - Հայոց Լ. ամիսը:	9. 200 կրամ - Գեղմ:
10. Սանձի փոկ - Կրկնուած քաղաձայններ:	10. Զայնակից գիրեր - Կեղծան, խարդախներ:
11. Մորթի շինուած պարկ - Հայաստանի հնամալ քերէն:	11. Տարբերութիւն - Խաւարի կամ աղօտանայ:

ԹԻՒ 5083 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԵՈՒՄԸ

1	Պ	Ա	Ղ	Ղ	Ս	Ի	Տ	Ս	Ա	Ս	Ա
2	Ա	Պ	Օ	Ր	Ի	Ն	Ի	Տ	Պ	Ո	Ր
3	Պ	Ա	Ղ	Ղ	Ր	Ի	Ի	Ն	Ռ	Ա	
4	Հ	Ա	Ս	Ա	Ա	Ա	Ի	Ն	Ք		
5	Ի	Ա	Ս	Ն	Ա	Ի	Ր	Ր	Ս	Ա	
6	Ա	Ր	Ձ	Ն	Գ	Գ	Մ	Ա	Ճ		
7	Ձ	Ձ	Ս	Ա	Մ	Ո	Ս	Ի	Ի		
8	Մ	Ա	Լ	Ի	Ա	Ր	Ա	Ի	Ի	Ս	
9	Ն	Ի	Ն	Հ	Ա	Ր	Ր	Ա	Ս	Ա	
10	Օ	Ն	Հ	Ա	Ս	Ա	Ս	Ա	Ա		
11	Պ	Ա	Ղ	Ղ	Ր	Ա	Ս	Ա	Ա	Ա	Մ